ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 28-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը «Եթէ ոք կամիցի ղկնի իմ դալ» բնաբանով։*

* *
*

Օգոստոսի 4-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Ֆրանսիայից եկած հայ ուխտավորների խումբը։

* *
*

Օգոստոսի 11-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։*

* *
*

Օգոստոսի 18-ին, կիրակի, *«Վերափոխումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Հրեշտակ ի մարդկանէ մարմնատեսիլ քերովբէ» բնաբանով։ Պատարագիչ սրբազանը, հավարտ սուրբ պատարագի, նախագահեց խաղողօրհնեքի հանդիսությանը։*

* *
*

Օգոստոսի 20-ին, երեքշաբթի. *Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի հայոց թեմական խորհրդի անդամ պր. Մովսես Շվուկյանը։*

* *
*

Օգոստոսի 25-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Արսեն արեղա Բերբերյանը։*

* *
*

Օգոստոսի 29-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Վեհափառ Հայրապետը Կարլովի Վարիում (Չեխոսլովակիա) մի ամիս հանգստանալուց հետո։ Վեհափառ Հայրապետին ընկերանում էր հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։*

Երևանի օդանավակայում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը։

Նորին Ս. Օծության դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

* *
*

Սեպտեմբերի 1-ին, կիրակի, *Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Սեպտեմբերի 8-ին, կիրակի. *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ի ժամ սուրբ պատարագի, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի սաներից Հակոբ Պարոնյանին և Ժիրայր Գայփաքյանին։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն, Աղեքսանդրիայում նոր վախճանված արժանապատիվ Տ. Հայկազուն ավագ քահանա Ոսկերչյանի հոգու խաղաղության համար։

* *
*

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի, *առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում հյուրընկալվող սփյուռքահայ ուսուցիչների խումբը։ Հյուրերը Մայր Տաճար այցելելուց հետո ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Ս. Օծությունը, ողջունելով սփյուռքահայ ուսուցիչներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Իր*

նան այսօրվան օղակները հավերժական այն աշակերտության, որ ծունկ դրավ, տարբեր ժամանակներու մեջ, Հայ Եկեղեցվո եռամեծ վարդապետներուն և հայ մշակույթի պայծառ երախտավորներուն առջև, հոգիի և մտքի մշակներ, որոնց հոգիները կհավատամ որ միշտ կսավառնին այս սրբազան հարկի վրա։

Սիրելի՛ աշակերտներ, այսօր նորեն ուխտի օր է, մանավանդ ձեզ համար, որպեսզի անշեղորեն և հաստատուն քայլերով քալեք մեր նախնիքներու կողմե գծված այն լուսավոր ճանապարհեն, որ կտանի դեպի ծառայությունը նախ Աստուծո Ս. Սեղանին, ապա մեր Եկեղեցիին, և հուսկ ուրեմն հավատացյալ մեր ժողովուրդին։

Ուխտի այս պահուն, ես ալ կհայցեմ Ամենակալի Աջի հովանին և ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետի օրհնությունները կրթական այս հաստատության վրա, անոր վերաբացման 18-րդ տարեդարձի առիթով։

Թող Տերը անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և կրթական այս օջախը Իր փառքին համար, մեր ժողովուրդի հոգևոր և բարոյական դաստիարակության համար, անմիջական հսկողության և ղեկավարության տակ մեր սիրելի Վեհափառ Հայրապետի»։

«Ընմանեալ Մովսէսի» շարականի կատարումից հետո, հանդես եկավ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հանուն Վեհափառ Հայրապետի, ուսանողության ուղղված խրատական խոսքերով։

Հանդիսությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով և սրբազան հոր «Պահպանիչ»-ով։

Սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի օր, ժամը 9-ին, նորից հնչեց զանգը Հոգևոր Ճեմարանում և սկսվեցին դասավանդությունները։

Ուսումնական այս տարում Հոգևոր Ճեմարանում սովորում են 35 ուսանողներ, բաշխված երեք դասարանների (Ա, Բ, Գ) և երկու լսարանների (Ա, Բ) վրա։

Սեպտեմբերի 13-ին, ուրբաթ օր, երեկոյան ժամը 6-ին, Վեհարանում, Նորին Ս. Օծության բարձր նախագահության տակ գումարվեց մանկավարժական առաջին ժողովը, որին ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ճեմարանի վերատեսչական և դասախոսական լրիվ կազմը։

Ժողովում հանգամանորեն վերանայվեց Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագիրը։ Այս առթիվ Վեհափառ Հայրապետը արեց մի շարք. գործնական և օգտակար թելադրություններ, Իր հայրական օրհնությունները ևս բաշխելով վերատեսուչ սրբազան հոր, դասախոսական կազմին և ուսանողության, ուսումնական նոր տարվա վերամուտի բարեբաստիկ առիթով։

Վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք ասաց Վեհափառ Հայրապետին՝ հանուն Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ուսանողության։